ՓԱՅԼԱԿ Փ. ԱՆԹԱԲԵԱՆ

Ա Յ Ր Ւ Ո Ւ Մ

Է

Մ Ո Մ Ը...



REL CH
ANTP
1978

ՓԱՑԼԱԿ Փ. ԱՆԹԱՐԵԱՆ

ԱՅՐԻՈՒՄ Է ՄՈՄԸ...

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ՎԵՀԻ ՄԱՍԻՆ

(ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԵՐԵՒԱՆ
1978

ԱՑՍ ՀԱՏՈՐԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՒԱՐՏԵՑԱՒ

1978 Թ. ՑՈՒՆԻՍԻՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Շարուած compuwriter IV TG տողաշար մեքենայիւն վրայ
cg — 1

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պրն. Փայլակ Անթաբեան գեղեցիկ գաղափարը ունեցած է գրի առնելու անցեալի յուշեր եւ տպաւորութիւններ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի մասին: Անոնք կը տանին հեղինակը հին օրերուն, երբ գաւազանակիր վարդապետն էր Ամենայն Հայոց Հայրապետին եւ կ'ապրէր մտերմութեանը մէջ կաթողիկոսական առաջին տարիներուն: Այնքան թարմ են այդ օրերու տպաւորութիւնները, տակաւին այսօր, որ իրենց քաղցրութեան մէջ կը գրաւեն մեզ եւս, հէքիաթային զնացքով մը:

Քսաներեք տարիներու իր պաշտօնավարութեան ընթացքին Նորին Սրբութիւնը այցելեց աշխարհացրիւ իր հօտին եւ իր զաւակները ուխտի գացին Մայր Աթոռ, յարգանք եւ սէր տանելու իրենց Հայրապետին: Ճանչցան զինք եւ ճանչցուեցան իրմէ: Շատերու ծանօթութիւնը, սակայն, կանգ առաւ կաթողիկոսական հանգամանքի սեմին, կամ իր հայրական ժպիտի չղարչին առջեւ: Հազուագիւտ եղան անոնք, որոնք բաղդատուրութիւնը ունեցան ներս մտնելու արուեստասէր, հայրենասէր, ազգասէր, գաղափարական, իր արիութիւններուն մէջ տառապող եւ իր

փառքին մէջ յուզուող մարդու աչխարհէն ներս։ Շատ քիչեր կեցան իր եւ Բաղրամեանի, իր եւ Իսահակեանի, իր եւ Յովսէփ Օրբելիի միջեւ, տեսնելու, լսելու համար Հայրապետի համահայկական սիրտին զարկը։

Դէպքերու եւ ապրումներու չարքը, որ ըսուած է այս գրքոյկին մէջ՝ նուազագոյն բառերով, կը տանի մեզ մեր Կաթողիկոսին չատ աւելի մօտ, կարծես արդէն իսկ հէքիաթային անձնաւորութեան մը բարձունքներուն։

Շնորհակալ ենք Պրն. Փայլակ Անթաբեանին, որ իր զգացուած եւ վերապրուած տողերու ճամբով կ'ընծայէ առիթ մը քիչ մը աւելի սիրելու եւ մեր յարգանքին մէջ՝ բարձրացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Գեղեցիկ վկայութիւն մը, որ ուրախութեամբ կը հրատարակենք։

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Երուսաղէմ
5 Յունիս 1978



ԱՍՈՒՄ ԵՄ ԽՕՍՔՆ ԻՄ ՈՉ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՆՉ ՇՆՈՐՀ ԱՐԱԾ ԻՐ ԵՐԱԽՏԻՔՆ Է ԻՆՉ ՊԱՐՏԱԻՈՐՈՒՄ, ՈՉ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՄԷՆ ՈՔԻՑ ԿՆՔՈՒԱԾ-ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՄԵՐ «ՀԱՑՐ ԵՒ ՈՐԴՈՒ» ՄՏԵՐԻՄ ՇՈՒՆՉԸՆ Է ԻՆՉ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԽՈՐ ԱԿՆԱԾԱՆՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄՂՈՒՄ, ԵՒ Ո՛Չ ԷԼ, Ո՛Չ ԷԼ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐ «ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ» ԻՄ ՀՈԳԵԴԱՐՁԻ ՀԱՒԱՏԱՄՔՆ ԱՆԵՄ, ԱՑԼ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԼՈԿ, ՈՐ ՀԱՑՈՐԴԻ ԵՄ ԵՍ ԵՒ ԻՆՔՆ Է ՕԾԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՀԱՑՈՑ...:

Մէկ հատիկն էր ցա վաղ այրիացած իր սիրելի մօր· իրրեւ այդպիսին՝ դառնօրէն դժուար, բայց վեհօրէն հաղցր, անսակարկ ընծայատուութիւնը Հայ Եկեղեցու սեղանին· ե՞րբ է մօր սիրտը եղել աւելի արի ու շռայլ···:

Օրերի մէջ մի պայծառ օր, ճիշդ այնտեղ, ուր Միածինը Ինքն էր իջել, Ինքն էլ եկաւ «խոնարհ սրտիւ», բայց հոգեկան լի խռովքով, բիւր խոհերով եւ երկիւղով մի սրբազան: Դեռ աբեղայ եղած ժամին վճռեց լինել Ս· Մեսրոպի պատկերի դէմ տեսիլք դարձած՝ անմնացորդ մուրջ-մուրջ այրուող այն մոմի պէս···:

Հասել էր ահա ժամը այրումի՝ հարազատ ազգի լոյս լինելութեան, «ազգ ու հայրենիք» սրբազան ուխտի ու ծուէն-ծուէն ցիրուցան եղած Հայ բեկորների կայուն միութեան եւ մտքի, ոգու սուրբ ճշխարհների յաւերժ պահպանման, բազմացման համար:

Այրո՛ւմ էր Մոմը···:

Բայց ի՞նչն եմ, ի՞նչն եմ առաւել յիշում այս լուռ գիշերին՝ լաւ բախտի բերմամբ կրկին ինձ գտած Երուսաղէմում:

Ցուշերից բազում այժմ յիշում եմ...

Առաւօտ էր վաղ ամառանոցային Կիսլովոդսկի մէջ: Վեհի հետ հանդարտ ելանք պտոյտի բըլուրները ի վեր: Լոկ մի խումբ մարդիկ էին կանխել մեզ: Քիչ առանձնացանք: Կանգ առաւ Վեհը, մարգարէի պէս դիտեց շուրջ բոլոր եւ խո՛ր շունչ քաշեց. ու յանկարծ կայտառ, լիովին գեղջուկ պատանիի պէս նստեց, թաւալուեց մարգապատ թաւիշի վրայ: Բայց շուտ լռջացաւ, շա՛տ շուտ լռջացաւ, կրկին հոտ քաշեց մարգից ու հողից, դարձաւ ինձ նայեց, թախծոտ յուզմունքով տրտում շշնջաց. «Դու գիտե՞ս արդեօք, որն է աշխարհի լաւագոյն բոյրը»: Ու նկատելով իմ մունջ ապշանքը, «անուշի» մի երգ ասելու նման լուռ աւելացրեց. «Ո՛չ, փարիզեան ո՛չ մի անուշահոտի մասին չէ խօսքս, այլ՝ նոր թխուած հացի, սերմ պայթեցնող գարնան թաց հողի, այս մարգագետնի եւ, գիտե՞ս որու, գրկիդ մէջ սեղմուած կաթնաբոյր մանկան մասին է խօսքս»: Թուաց, թէ Վեհը այստեղ հեկեկաց, մինչ շուրջն ամէնուր խոնաւ հողի մէջ պայթում էին յղի սերմերը...:

Բարապանի զարկն էր դրանս: Չէի ասի ուրախացայ· շատ էի անտրամադիր, երիտասարդ վարդապետի աւանդական խռովքները խուժել էին սրտիս վրայ: Մի պահ շփոթել էի լինելիքի ստոյգ ժամը: Ցիշեցի: Գնացի: Վեհն արդէն բազկաթոռին էր, ռադիոյին դէմ յանդիման: Բայց խաղաղ չէր, հոգեկան անխառն հրճուանքը ակներեւաբար հանգիստ չէր տալիս նրան: Բարի եւ լուրջ էր պահը· հազարաւոր Հայ ուստրեր ու դուստրեր լսելու էին Իր խօսքը: Թէեւ այդ առաջին անգամ չէր, բայց այլ էր այս մէկը, այլ ուժ ու խորութիւն, այլ խորհուրդ ու միտք-բանի կար այս անգամ Իր խօսքի մէջ: Յանկարծ լեզու առաւ ռադիօն· «Երեւանն է խօսում, Երեւանն է խօսում»· ինչ անց արդէն ինքը՝ Վեհն է հանդիսաւոր պատգամ տալիս, ու հայրենի աշխարհից առաջին անգամ զնգում է մինչ այդ լուած խրոխտ մի անուն՝ *Սարդարապատ*···: Այն այսօր արդէն երգ է դարել ու հնչում է ամէնուրեք, ծագից մինչ ծագ՝ Հայ սրտերին, մտքերին, ոգուն փոխանցելով Վեհի երբեմնի անկշռելի ուրախութիւնն ու հայրենաշէն պատգամի խորհուրդը խորին:

Լեցուն, իմաստալից գիշեր էր այդ գիշերը···:

Նորընծայ էի: Առաքուեցի Մոսկուա: Պէտք էր

նորոգել եւ վերաբանալ եկեղեցի: Ժողովուրդի անձնուէր ջանքերով եւ նիւթական գորտրիկ զոհողութեամբ ամէն ինչ պատրաստ էր: Վեհի առաջին այցն էր սփիւռքահայութեան: Վերադարձաւ: Չափազանց յուզիչ էր Վեհի հանդիսաւոր մուտքը Մոսկուայի նորաբաց Հայոց եկեղեցու մէջ: Մունջ ու անտրտունջ լռութիւնից յետոյ առաջին անգամ հնչեցին Հայ եկեղեցու զանգերը. . .:

Ո՛հ, ինչպէ՛ս էր հրճւում Վեհը, ինչպէ՛ս էր հրճւում. չէ՞ որ այդ պահին օղակից փրթած հայրենախօս լեզուակ էր դրել Հայ եկեղեցու շա՛տ երկար լռած զանգի բերանում:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ. . .» ինքն իր մէջ կրկնում էր Վեհը՝ իր արդար վարձին տիրացած մշակի արդար ցնծութեամբ:

Վրաստանի ամենագեղատեսիլ վայրերից մէկում՝ «Րիցա» լճի զմրուխտ ափին էր այդ տարի հանգստանում Վեհը: Ու մի երեկոյ շրջապտոյտի ելանք: Դիմացից գալիս էին չորս պարմանի աղջիկներ: Մօտեցան: Հայեր էին: Մին նրանցից՝

— Աղջի՛, սրանք տէր հայր են—, ասաց, ու մեզնք լսեցինք:

— Ո՞րտեղացի էք—, հարցրեց Վեհը, չափա-

զանց մտերմիկ բարեացակամութեամբ:

— Սուխումիից–, պատասխանեցին աղջիկները գրեթէ միաբերան՝ հարցական ու զարմացական հայեացքով:

— Ի՞նչ էք անում այս տեղերում:

— Հանգստանում ենք:

— Մենա՞կ:

— Ո՛չ, վերը վրացիների տակ, լիքը Հայեր կան: Գալիս ենք ամէն տարի:

— Հայաստան չէ՞ք գալիս:

— Մէկ մէկ գալիս ենք:

— Էջմիածի՞ն:

— Անցեալ տարի եկել էինք, որ Վազգէն Առաջինին տեսնենք, բայց չթողին:

— Ո՞վ չթողեց:

— Մի ջահել վարդապետ: Այնպէս էր իրեն երեւակայում, ասես կաթողիկոսը ինքը լինէր: Ասաց՝ «Վեհափառի մօտ մարդ կայ, Աւետիք Իսահակեանը, չի կարող ձեզ ընդունել»: Ենպէս ուզում էինք երկուսին էլ տեսնել...:

— Ու չտեսա՞ք:

— Վերջը Իսահակեանին տեսանք, երբ բաւական ժամանակ յետոյ դուրս եկաւ ու գնաց Երեւան: Ջեռնն էլ համբուրեցինք:

— Ու Վազգէն Առաջինին այդպէս էլ չտեսա՞ք:

— Ո՛չ, վարդապետը չթողեց:

— Կը ճանաչէ՞ք այդ վարդապետին, եթէ տեսնէք–, թեթեւ ժպտալով յարեց Վեհը, աչքի տա-

կով ձայելով ինձ, հասկացնելով՝ «Կայ-չկայ՝ այդ դու ես»: Ես մինչ այդ արդէն յիշեցի եղելութիւնը եւ խղճիս խայթն սկսուեց: Զգացի որ, եթէ վեղարով լինէի այդ պահին, աղջիկները ինձ պիտի ճանաչէին:

— Երեւի-, աւելացրին աղջիկները, թեթեւ տարակուսանքով:

— Ուրեմն այդ ջահել վարդապետի պատճառով մինչեւ հիմա էլ չէ՞ք տեսել Վազգէն Առաջինին:

— Ո՛չ:

— Եկէ՛ք, հիմա դիմեցէք այն ձոյն վարդապետին-, անուշ ըմծիծաղը դէմքին թելադրեց վեհը, Աջը իմ կողմ երկարելով: -Այս անգամ ձա անպայման թոյլ կը տայ, եւ դուք տեսած կը լինէք Վազգէն Առաջինին...:

Անկեղծ ասած, ինձ թուաց թէ աղջիկները չըկռահեցին վեհի կատակ-ակնարկը: Հազիւ հասել էինք մեր հանգստարանը, ու, ինչ տեսնենք, ութ-տաս աւտոմեքենայ խուժեցին բակ: Դուրս եկողը, չորս աղջիկների հետ միասին, «Վազգէն Առաջինն» էր հարցնում...:

Երջանիկ ժպտում էր վեհափառը· անտառային հեռաւոր այս խլութեան մէջ անգամ նրանք Իր շուրջն էին, Իր հետ, – Իրեն կարօտ, Իրեն ծարաւի, Իր Հայերը...:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Ամենայն Հայոց Վարպետն իրար հետ են եղել միշտ, ոյնիսկ երբ իրար կողմի չեն եղել: Սիրելը ի՞նչ, ո՞վ չէր սիրում Վարպետին ու Վեհին: Իրենցն այլ էր, ա՛յլ, խորապէս ա՛յլ: Վարպետը Մայր Աթոռ գալիս էր եւ նախապէս, բայց շատ աւելի յաճախ Վեհի տարիներին: Իսկ Մուղնու Ս. Գէորգի տօնին նա այնտեղ էր ինչ էլ որ լիներ. Սասնայ սիրեցեալ ժողովուրդն էր այդ օրը գալիս Ալագեազի կողերից սրբազան ուխտի: Պատարագի մըրմունջը, աւանդական զուռնան, թմբուկն ու Սասնայ թնդացնող պարը գրեթէ միաժամանակ փառաւորում էին Հայոց երկիրն ու հողը:

Այս անգամ եւս այնտեղ էր Վարպետը, բայց ոչ մենակ, նաեւ Դերենիկ Դեմիրճեանն էր այնտեղ, թիթեռներից էլ թեթեւ թռչող Սասնայ դուստրերի եւ ուստրերի երփներանգ շրջապատի ու ամենազուլալ հիացմունքի մէջ: Ո՞վ գիտէ. նրա՞նք էին աւելի Հայ գրականութեան այդ հրսկաներով լեցուն, թէ հսկաները՝ հին ու նոր Սասունով...:

— Դերենի՛կ, լա՞ց ես լինում–, յանկարծ հաւաստեց Վարպետը:

Ապշեցայ, երբ հաստատեցի Վարպետի ասածը:

— Այ տղայ, ասեմ, լաւն էլ դու ես անում: Իմը՝ ի՞նչ է, արցունքը որ չկայ՝ լաց չէ՞: Սակայն, երանի մեզ պէս լացողներին: Իսկ դու,

Սասուն, պարէ՛ հա պարէ՛, ոչ մի գազանամարդ էլ չկայ, որ պարիդ թափը կտրէ, պարէ՛ հա պարէ՛:

Ինչ յուզիչ ու իմաստուն էր նրանց լացը· առաւել՝ տեսնողը գիտէ:

Ընթրիքից յետոյ, հին վեհարանի բակում մըտերմաշունչ տաղաւարի մէջ էին, վեհափառի կողքին: Զգում էր հաղցր, իմաստուն զրոյցը Սասունից մինչ Արարատ, Մաշտոցից մինչ Խրիմեան Հայրիկ, Նարեկացուց մինչ Զարենց, հին Արտաշատից մինչ նոր Երեւան, Սիփանի անծայր ծայրից մինչեւ Մայր Աթոռ···:

— Ես սկսում եմ մրսել–, կակուղ ծոր տուեց Դերենիկ Դեմիրճեանը:

— Ա՛յ տղայ, դու ծածուկ մտքեր կարդալ իրօք որ լաւ գիտես· ես էլ եմ մրսում–, իսկոյն աւելացրրեց Վարպետը:

Վեհափառը ինձ նայեց, նայեց իրենց·

— Ձեզ հագցնելու յարմար բան չունենք: Ինչպէս գիտէք, մերը եկեղեցական վերարկու է:

— Բերէ՛ք, բերէ՛ք–, ընդմիջեց Վարպետը:

Վարանելով ոտքի ելայ, բայց այլ ելք չկար· Վեհի ակնարկը հարկադրաբար նոյնն էր թելադրում:

Հագան եկեղեցական վերարկուները: Շատ ուրախացանք ու խնդացինք: Շարունակուեց զրոյցը: Աշխուժացաւ նաեւ Դեմիրճեանը: Եւ այդ եռանդուն զրոյցի ժամանակ, որտեղից որտեղ,

ասես ամենայն լրջութեամբ վարպետը դիմելով վեհին, խնդրեց.

— Վեհափա՛ռ, հիմա էլ՝ մի պանակէ Գերաշընորհ Դերենիկ Սրբազանին, թէ չէ, Տէր Աւետիքին նուիրածդ խաչը որ տեսաւ, ոչ իր ձայնը կը լսենք, ոչ էլ՝ իր ջութակի:

Մի ակնթարթ այդ թէժ «լուութեան» մէջ չհասկացանք, յետոյ միայն միաբերան խնդացինք՝ Վեհափառը, Դերենիկ «Սրբազանը», «Տէր Աւետիքն» ու ես:

Ի՛նչ հրաշալի ժամ էր. «Ո՛ տայր մեզ» նրա անկրկնելի հաղորդութիւնը:

Բայց, դարձեալ, Վարպետը: 1957 թուական: Երկրի չորս ծագերից, Սովետական Միութեան տարբեր կենտրոններից Հայորդիներն ու դուստրերը հաւաքի էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Ցնծալից տօն էր, տօն միասնական կամքի՝ թէկուզ տարակարծութիւնները շատ, տօն մեկտեղման՝ թէկուզ անջրպետներն անթիւ: Առատ սեղան, սեղանի շուրջ տաքուկ մթնոլորտ, ազգով ու հայրենիքով ջահուած հոգիներ...: Ու իրենք՝ վեհն ու Վարպետը, եւ դիմացը ինքը՝ Տաճարն Էջմիածին:

Խօսքեր շատ եղան՝ հայրենաբաղձ ու ազգաշէն: Խօսքը իրենն էր՝ ալեզարդ Վարպետին.

— Էջմիածինը միայն այս հաստաբետ պատերը չէ, այս քարերը չէ· այն ամէնուր է, մեր հոգու մէջ ու մեր սրտում: Սիրեցէք Էջմիածինը: Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Եթէ նրա մաշկը քորես, Էջմիածին դուրս կը գայ:

Ու դարձեալ նոյն իմաստունի իմաստնացած լացը, հայրենասէրի հրճուագին լացը, իր նպատակին ու երազներին տիրացած հոգու եւ սրտի լացը· մի լաց, որով համակուեցին բոլոր ներկաները, որին հաղորդ եղան Հայերից այն բոլորը, որոնք այդ գիշեր եւս ունկնդրեցին «Երեւանի ձայնը»:

Դրանից յետոյ, չեմ յիշում, Վարպետը մէկ էլ եկա՞ւ Ս· Էջմիածին, թէ այդ իր վերջին այցն էր, վերջին ուխտը, վերջին պարտքը:

Չգիտեմ, կանխատեսիլ ի՞նչ հրաշքով էր վեհը ինձ հրահանգել՝ ձայնագրել Վարպետի այդ խօսքը, որն այժմ Էջմիածնի սրբազան մասունքների մէջ պահւում է գուրգուրանքով իբրեւ մի նոր նշխարհ:

Գիշեր է ամէնուրեք, նաեւ Մայր Աթոռում, բայց «լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս է կախուեր», կաթնածիր, խաղաղ, հրաշալի գիշեր: Մայր Տաճարն ասես հիմնովին գետնից կըտրուել ու կախուել էր երկնքից: Գրիգոր Լուսա-

ւորչի երա՞զն էր կրկնւում…: Լուռ էր վեհափառը, աւելի վեհացած, աւելի ոգեղինացած: Մէկ-մէկ դէմքը դարձնում էր դէպի երկինք, ասես, բանաստեղծութիւն խմելու համար. «Լուսնակն աւո՛ւշ, հովն աւո՛ւշ»:

Քայլում ենք համաչափ, անխօս: Տաճարի շուրջ բոլոր լուութիւն է, երկարատեւ, ինքն իր հետ խօսող լուութիւն, այնպիսի խորախորհուրդ մի լուութիւն, որին կարելի է անյագ ունկնդրել …:

Ձխօսողը վեհն է, ես պարզապէս չեմ համարձակւում ընդմիջել լուութիւնը. մտածում եմ՝ այդ շատ կոպիտ բան կը լինի, անզգամութեան պէս մի բան. ստո՛ւս, վեհը լուութիւն է լսում…: Գուցէ Լուսաւորիչն է աղօթք մրմնջում, գուցէ Մաշտոցն է իր իսկ գրերով յօրինած ապաշխարութեան շարականներ աշխարհում՝ «Ծով կեանցաղոյս հանապազ զիս ալեկոծէ», թերեւս Նարեկացին է «Ողբերգութիւնն» իր ողբում, կամ՝ Շնորհալին է ուխտի եկել ու Միածնաէջ սեղանի առաջ արեւագալի իր երգն է ասում. «Լո՛յս, արարի՛չ լուսոյ, առաջի՛ն լոյս…», գուցէ եւ Վարպետին, Զարեհցին, Կոստան Զարեհանին, Պարոյր Սեւակին, Սիլվա Կապուտիկեանին էր ևս ունկնդրում: Գուցէ եւ…

— Գնանք, ինչ էլ երաժշտութիւն լսելու–, երկար լուութիւնից յետոյ շշնջաց Վեհը:

Գնացինք: Նոր էին արտասահմանից ստաց-

ւել դասական երաժշտութեան մի քանի ձայնապնակներ:

— Մոցարտ, անշուշտ Մոցարտ–, խաղաղ պատասխանեց վեհը իմ հարցական հայեացքին, թէ՝ «ի՞նչ պիտի ուզէիք լսել, վեհափա՛ռ»:

Հնամեայ ու հնաբոյր հին վեհարանի դահլիճում սկսեց մեղմ ու հանդարտ ծաւալուել մոցարտեան «աստուածային» երաժշտութիւնը, ինչպէս մեռոնը մկրտութեան աւազանի զուլալ ջրի երեսին:

— Հանգստու լոյսը–, հազիւ լսելի ձայնով ասաց վեհը, փակելով աչքերը եւ ճակատը յեցելով աջ ձեռքի մատներին:

Ծաւալւում էր երաժշտութիւնը, ողողում դահլիճը եւ դահլիճից դուրս, ասես ողջ տիեզերքը:

Քիչ անգամ էր վեհափառը կարողանում լինել այսքան ինքն իր հետ, իր այնքան սիրած բնութեան, բանաստեղծութեան, երաժշտութեան ու արուեստի հետ: Ժամանակը այնքա՛ն հաշուով է տրւում վեհին...:

Իսկ ե՞ս: Ես մեծ դժուարութեամբ էի ունկնդրում դասական որեւէ երաժշտութիւն, շատ էր ինձ անհաղորդ, այնքան շատ, որ նոյնիսկ տարբեր առիթներով արժանացել էի վեհի սիրալիր յանդիմանութեանը: Բայց այդ գիշերը, այդ տարօրինակ, անկրկնելի, ազնուազարմ այդ գիշերը հարկադրեց ինձ լսել ամենիմաստ լռութիւն

եւ դասական «աստուածային» երաժշտութիւն: Ինձ թուաց մարդը այդ գիշեր մարմնացաւ, մարդացաւ իմ մէջ:

Շնորհակալ եմ, վեհափա՛ռ, ձաեւ այս անփոխարինելի պարգեւիդ համար:

1958 թուականին էր: Գերագոյն Սովետի ընտրութիւնների առիթով Երեւան էր եկել Անաստաս Միկոյեանը: Հանդիպում էր նրա հետ Պետական Օպերայում: Հրաւիրուած էր Վեհափառը: Օթեակում մեր կողմին էր ձաեւ սփիւռահայ բանաստեղծ եւ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկեանը: Որոտաց դահլիճը: Բեմ բարձրացաւ Անաստաս Միկոյեանը եւ իր ճառն սկսեց հատ-հատ արտասանութեամբ, բայց մաքուր հայերէնով. ապա՝ ներողութիւն խնդրեց, որ շարունակելու է ռուսերէն: Ասելիքն ասուեց ու վերստին ծափերի որոտ: Ընդմիջում: Համերգային բաժինը՝ յետոյ: Օթեակ մտան մարդիկ ու ներողամտօրէն խնդրեցին, որ Վեհափառը հաճի իջնել Օպերայի տնօրէնի ընդունարանը, ուր իրեն սպասում էր Անաստաս Միկոյեանը: Հրաւէրը գալիս էր անձամբ նրանից: Միանգամայն հաճելի լուր բոլորիս համար: Մուտքին Վեհափառին ընդառաջ եկաւ ինքը Անաստաս Միկոյեանը եւ Հայաստանի կուսակցական ու պետա-

կան ղեկավարներից մի բանիսը: Հայոց Հայրապետը եւ Հայ պետութեան իշխանաւորները վերստին դէմ-դիմաց՝ հանդիսաւոր ու յաղթական...:

— Ողջո՛յն Վազգէն Վեհափառ: Այսօր շատ ուրախ եմ ձաեւ ձրա համար, որ Ձեզ ողջունելու առիթ է տրւում ինձ:

— Նմանապէս ձաեւ՝ Մեծիմ: Այս թանկագին եւ խորհուրդներով լեցուն առիթով երջանիկ եմ փոխանցելու Ձեզ յատկապէս Սփիւռքի մեր զաւակների հիացմունքն ու սէրը՝ պետական խոշորագոյն գործչիդ հանդէպ:

Հայրենիքս, Սփիւռքս, Եկեղեցի առանցքի շուրջ զրոյցը կարճ չտեւեց: Զարմացնում էր Անաստաս Միկոյեանի հմտութիւնը մեր Եկեղեցու պատմութեան եւ պատմական դերի մասին:

— Պետութիւն, պետական կեանք յաճախ չի ունեցել Հայ ժողովուրդը անցեալում: Եկեղեցին է այդ միջոցին ստանձնել ժողովրդի կառավարման գործը, ըստ այդմ էլ կատարել է բաղաքական ու մշակութային օգտակար դեր-, փորձում էր բացատրել ձա Ազգբէյջանի կուսակցական ղեկավարին-· այդպէս չէ՞, Վեհափառ, ես Ձեմարանում այդպէս եմ սովորել:

Բնական է, Վեհը հաստատեց ձրա խօսքերը բերկրանքով:

— Ի դէպ, այս երիտասարդը ինձ մեր Ձեմարանի հայր սուրբին է յիշեցնում-, ասաց ձա,

ակնարկելով ինձ–: Գիտէք չէ՞, նրան՝ Գարեգին Յովսէփեան վարդապետին: Ասենք, ինչպէ՞ս չէք գիտեր, նա էլ յետոյ կաթողիկոս եղաւ: Ի՛նչ մեծ զարգացում ունէր, ի՛նչ հիանալի հոետոր էր: Կարծեմ, այժմ էլ Ճեմարան ունէք: Լա՛ւ է, լա՛ւ:

Եւ այսպէս շարունակւում էր զրոյցը: Լսում ու հետեւում էինք ուշադիր:

Մօտեցանք սեղանին: Միկոյեանը ինքը ուզեց լցնել վեհի բաժակը: Առաջարկեցին այդ օրերին նոր մշակուած «Կիսաբաղցր» գինին: Լցրեց ու ասաց·

— Իրապէս, երեւում է, որ լաւն է:

— Իսկը մեռոնի նման–, ուրախ ուզեց լրացնել ներկաներից մին, հնչեցնելով ժողովրդական խօսքը:

— Խայտառակ մի անէք մեզ վեհափառի առաջ, ժպտալով, մեղմ յանդիմանեց նրան Անաստաս Միկոյեանը–: Ախր, մեռոնը կարմիր չի լինում այս գինու նման, դեղին է լինում, հալած արդար ուղի պէս:

Հայ ժողովրդի հետագայ առաւել երջանիկ օրերի համար միասին բաժակ բարձրացրին Սովետական Միութեան Նախագահ Անաստաս Միկոյեանն ու Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Առաջինը:

Սիմվոլիկ, բայց եւ իրական պատկեր:

Բախտաւոր Կաթողիկոս···:

Նոյն օրերին էր: Վեհարանի ծաղկեայ դահլիճում՝ Վեհափառը, Վեհամայրը, Անդրանիկ Ծառուկեանը եւ ես: Ծառուկեանը շատ էր ոգեւորուած, եթէ չեմ սխալւում, Հայաստանի գրողների հետ իր ունեցած հանդիպումից եւ այդ առիթով տեղի ունեցած բաց զրոյցից: Գոհ էր Վեհափառը Հայաստանի եւ Սփիւռքի միասնութեան ճաեւ այդ կարեւոր օրակի համար: Ամբողջ զրոյցը այդ միասնութեան, Սփիւռքի ճակատագրի, Էջմիածին–Անթիլիաս խոովքների ու հայրապետական բազում այլ հոգսերի մասին էր:

Ճիշդ այդ պահին ներս մտաւ Վլատիմիր Ենգիբարեանը՝ աշխարհահռչակ Հայ բոնցֆամարտիկը, իր խիստ ճագելի ճորահարս տիկնոջ եւ մարզիչի հետ: Ենգիբարեանը անսեթեւեթ, մտերմիկ պարզութեամբ համբուրեց Վեհի Աջը: Ցայտնի էր· ըստ իր աւանդական սովորութեան, հերթական միջազգային պատասխանատու բոնցֆամարտից առաջ եկել էր Վեհի օրհնութիւնն առնելու: Մեկնելու էր Թեհրան: Ծանօթացրինք Ծառուկեանի հետ, որն իր համար բոլորովին անսպասելի հանդիպումից շատ ուրախացաւ:

Երբ ձեռնուեցան, Ծառուկեանը հարցրեց·

— Այս փոքրիկ ձեռո՞վ կը յաղթես:

— Դեռ մի ողջ–առողջ ոսկոր էլ չկայ վրան–, լրացրեց Ենգիբարեանը ու ճստեց:

— Ո՞ւր էիր վերջին անգամ, որո՞ւ դէմ մարտի

ելար–, հարցրեց վեհը, արդէն բարեփոխուած տրամադրութեամբ:

— Գերմանիա, վեհափառ, մի Թուրֆի հետ: Աչֆերս փակեցի, յիշեցի Եղեռնը, կոտորածները, մեր մայրերին ու աղջիկներին, ու... մէկ հատ զարկի:

— Վե՞րջը–, տեղից ցատկելու պէս բարձրացաւ Ծառուկեանը:

— Շալակած հիւանդացոց տարաւ...:

— Է՛, բանի որ Թեհրան պիտի երթաս, այս անգամ ալ Վարդանանքը յիշէ ու... մէկ հատ ալ հոն զարկ–, կատակեց Ծառուկեանը:

Դահլիճը համակուեց ուրախութեամբ: Հայու բազկի մէջ յաղթական ուժ էր կուտակուում:

Տեսե՞լ էք, ինչպէս արեւամուտին անգամ թըզուկ մարդու շուքը ձգո՛ւմ է, ձգո՛ւմ: Իսկ Եսայի Գապաղեանը՝ ինքը այդպէս մի ձգուած կենդանի շուք էր, առանց որեւէ արեւամուտի: Վանքի գիշերային պահակն էր: Խիզախ ու փառահեղ:

Դարձեալ Տաճարի շուրջ աւանդական շրջապըտոյտի ժամանակ էր, երբ մեր կողմով անցաւ Եսայի Գապաղեանը իր կերպարանքին այնքան պատշաճ իր ահռելի գամփռին հետ: Գլխարկը հանեց եւ հեռուից, բամուց գլխահակ բարդու

ման կոացած՝ ողջոյն տուաւ: Վեհը կանգ առաւ, ընդունեց ողջոյնն ու ժպտալով ասաց.

— Անչա՛փ վստահութիւն, ապահովութիւն եւ խաղաղութիւն է ներշնչում շրջապատին այս մարդը: Կարծես առնում, տանում է ինձ մեր դիցաբանութեան հեռաւոր աշխարհները: Զարմանալի ապառաժեայ կերպարանք է:

Ես հպարտութիւնից մի տեսակ անհամբերութիւն եմ զգում խօսելու: Մտածում եմ, միթէ՞ Վեհը չգիտէ թէ ո՞րտեղացի կամ ո՞վ է Եսային, միթէ՞ մոռացել եմ ասելու այդ, երբ նրան աշխատանքի ընդունելու առաջարկ եմ արել: Փորձում եմ համբերել:

— Կանչի՛ր, թո՛ղ գայ, մի ֆիչ խօսեմ հետը:

Եկաւ, երկատուած ողջոյն տուեց եւ աղմկալից համբոյրով առաւ Վեհի Աջը:

— Աստուծ օգնական:

— Ի՞նչ ասացիր, Եսայի, կրկին ասա:

— Աստուծ օգնական-: Վերջին բառն էլ այնպիսի շեշտով արտասանեց, որ բարբառային բառական կոպիտ առոգանութիւնը կասկածի տեղ չէր թողնում:

— Քանի՞ տարեկան ես:

— Մըկ քառսուն, մըկ յիրսուն միասին. առ քեզի՝ եիթմըշ տարի:

Վեհը կէս զարմացած, կէս հարցական նայեց ինձ:

— Այո՞:

— Հապէ, մեՆք այդչափ եՆք: Դուն տհա պըզտիկ ես մեզի համար: Քառսուն կ'ըլլա՞ս–, լեռնային պարզութեամբ արձակեց Եսային:
Ես ուրախութիւնից չգիտէի ինչ անել:
— Հրացան ինչո՞ւ ես կախել, կարիք կա՞յ:
— Եահ, չառւ ասի, չվա կախեր եմ հրացա՞ն: Առանց թվընկի պահա՞կ: Էմ մարը ինձի թվընկով է բերեր, հա՞, ճիշդ կ'ըսեմ, ատիկա աղէկ գիտցիր: Առանց թվընկի այս վանքը ո՞վ պահէ, քեզի ո՞վ պահէ...:
Այս շատ բացայայտ բարբառային ելոյթի վրայ Վեհը, դառնալով ինձ, ասաց.
— Հասկացա՞ր, չէ՞:
Իմ փոխարէն, Եսային սկսեց խօսել.
— Հապ չի՞ հասկնար: Էմ ընկիրէն, Անթարինց Փանիսէն տղան է, ինք ալ ճէպէլ Մուսըցօ է, Մուսատաղցայ:
— Ուրեմն դու ճէպէլ Մուսացի՞ ես, Եսայի, դու Մուսալեռցի՞ ես–, հաճելի անակնկալի եկած, բազմապատկուած ուրախութեամբ հաստատեց Վեհափառը–, այդպէս ասա: Հիմա ամէն ինչ հասկանալի է. դու, քո հրացանը, քո երկարաճիտ կօշիկները, քո գամփոը, ինձ «թըվանկով» պահելը...:
Ըստ երեւոյթին, Վեհը այդ պահին կրկնեց շուրջ քսան տարի առաջ Ֆրանց Վէրֆէլի գրքի առնչութեամբ Մուսալեռցու մասին իր արտայայտած մտածումը. «...Այդ Հայերը կը Ներ–

կայացնեն ոչ թէ պատահական անհատականութիւններ, այլ հարազատ Հայեր, որոնք իրենց մէջ կը կրեն Հայ ժողովուրդի՝ դարերուն դիմացած Հայ ժողովուրդի բարոյական դիմագիծը՝ տոկուն, առողջ, վեհ եւ գեղեցիկ ձեւով»:

— Ինչո՞ւ շուտ չասացիր, որ Եսային Մուսալեռցի է–, դիմեց ինձ Վեհափառը: Ապա, իբրեւ թէ յանդիմանելով, աւելացրեց.– Այս ի՞նչ է, Մայր Աթոռը Մուսալեռցիներո՞վ ես լցրել. դու, Եսային, կինը, Ազատը՝ տիկնոջ հետ, Զօհրապը:

— Ուրիշներ էլ կան, Վեհափառ–, գոհունակութեամբ լրացրի ես:

— Լաւ, շատ լաւ: Գիշեր բարի, Եսայի:

— Քոյս բարա, Վեհափառ, քոյս բարա:

Մուսալեռցի ժողովրդի, նրա հերոսական դիւցազնամարտի նկատմամբ մինչեւ այսօր իսկ, շուրջ կէս դար, նախ իբրեւ մտաւորական Հայորդի, ապա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Իր ոգու մէջ առանձնակի համակրանք սնուցանելը միթէ՞ Վեհի յուզական աշխարհի հայրենասիրական մէկ արտացոլքը չէ···:

Մի տեսակ շատ «լուրջ», մտայոյզ ուրախութեան մէջ էր Վեհափառն այդ առաւօտեան, մի տեսակ՝ վերացած, բայց գոհ ու խաղաղ: Վիճա-

կի համեմատ ենթադրեցի, որ պատճառն էլ իւրովի է, ոչ սովորական: Եկել էի առաջնորդելու նրան դասի՝ Հոգեւոր Ճեմարան: Դասից յետոյ ուզեց շուտ վերադառնալ: Նստեց գրասեղանի առաջ: Լուռ էր, բայց երջանիկ հայեացքով նայում էր Վեհարանի դահլիճի պատերին: Մնաց, մնաց ու հարցումն ուղղեց ինձ.

— Ոչ մի փոփոխութիւն, ոչ մի նոր բան չե՞ս նկատում:

Նայեցի շուրջս, նոյնիսկ պատերին, հակառակ որ ուզեցի անպայման տեսնել ակնարկուած «նոր բանը», որը պիտի Վեհափառի արտասովոր, բայց ուրախալի հոգեվիճակի պատճառը լիներ, սակայն, այդուհանդերձ, նման «նոր բան» չկարողացայ նկատել: Վեհափառն այդ զգաց:

Ելաւ տեղից եւ ինչ հեռու, վառարանի մօտ կանգնեց, ձեռքերը ա-լա-Նապոլէոն ծալլեց կուրծքին ու հայեացքը սեւեռեց դիմացի պատից կախուած գորշաւուն, խունացած վարագոյրի վրայ: Ես, պարզապէս, այն ժամանակուայ իմ իմացութեան ու ճաշակի թելադրութեամբ կարողացայ միայն ինքս ինձ հարցնել.

— Միթէ՞..., միթէ՞ եղածը այս է եւ ուրիշ ոչինչ:

Պարզուեց որ, այո՛, եւ ուրիշ ոչինչ: Ռումինիայից նոր էր բերուել հայկական հնամեայ, տխրամած, իր ու իր ժողովրդի երբեմնի բախտի նման տառապագին, սակայն իմաստալից ու

թանկագին մի եկեղեցական վարագոյր, դաջուած մանրանկար մուգ-կապոյտ ծաղկազարդերով: Այսման միայն: Բայց թւում էր, թէ վեհը տուն էր բերել վաղո՛ւց, շատ վաղո՛ւց իր երամից պոկուած մի հայ կոունկ, մի յոգնած արագիլ, որի թեւերին սաւառնել էին Հայի կարօտի, երազների, տաղանդի ու պատմութեան վիշտն ու բարութիւնը:

Ես, ինձ հետ եւ շատերը այնուհետեւ, վեհին յաճախ նման հոգեկան «խոհեմացեալ» ուրախութեան մէջ տեսան, երբ անմիջականօրէն իր միջոցով փրկւում ու տուն էր գալիս մագաղաթեայ մի պատառիկ, ասեղնագործ մի նշխարի, մի նըկար, մի խաչքար...: Այդպէս է, երբ վերստին կեանքի էր կոչում Հայ հանճարի թերեւս լաւագոյն արտայայտութիւնը հանդիսացող Հայ ճարտարապետութեան խամրող, փլուզուած, անշըքացած գոհարներից՝ Բջնին, Խոր Վիրապը, Գեղարդն ու Մայր Տաճարը: Հայ իրականութեան ամենաբազմերախտ հանճարը՝ «Օշականի անհուն մեռեալը» ոչ մի կերպ չէր սեղմւում իր խիստ համեստ, անփառունակ շիրիմի մէջ: Վեհը նրան էլ պատշաճ տուն պարգեւեց: 1915 թուականի Եղեռնի ճահճատակներին կոթողեց յուշարձան՝ իրրեւ ժայռացած աղօթք եւ ուխտ, կոթո-

ղեց «Կաթնաղբիւր» յուշարձան, որպէսզի հաղորդուի «կենդանին ընդ մեռեալս», այդտեղ էլ անջրպետ չլինի Հայ մարդկանց միջեւ, եւ «ոչի՛նչ, ո՛չ ոք չմոռացուի»: Վերջապէս, նման մի խանդաղատալից ոգեկան ինքնամոռաց հրճըւանքի մէջ տեսաւ նրան վերջերս, երբ օրհնութիւն բաշխելու նման բաց էր անում վարագոյրը եւ ցոյց տալիս մեր «Այբ-Բեն-Գիմը»՝ ոսկեձոյլ ու մարգարտահեռ, իբրեւ «Մայր տառից», իբրեւ իւրովի յաւերժական յուշարձան եւ երախտագիտական տուրք Մեսրոպ Մաշտոցին: Այնտեղ տարիներով կուտակուած ժողովրդական լուման է բեկբեկւում՝ հրճուալից արցունքի ծիրանավառ գոյներով: Վերջին լուման ընծայաբերել է այրի մի կին, որը Եղեռնի սեւամած տարիներից, գաղթականութեան արիւնլուայ ճամբաներով, սփիւռքի հայամերժ մշուշներից անցել ու կատարել է երբեմնի պարման մանկուհիի իր ուխտը՝ իր մօր իսկ իրեն յանձնած ոսկին նըւիրաբերել Միածնաէջ Մայր Տաճարին:

Այսպիսի մեծ ու փոքր լումաներով է ահա Վեհը բազմազան ու բազմաթիւ յուշարձաններ կառուցում, որ Հայի անցեալից իրօք «ոչի՛նչ եւ ո՛չ ոք չմոռացուի»:

Ամէն, եղիցի եւ եղիցի:

Մոսկուա: Կրեմլ, փառաշուք ընդունելութիւն է: Հրաւիրուած է նաեւ Վեհափառը: Նրան ընկերացել էինք ես ու Եղիշէ վարդապետ Սարգիսեանը: Բազմազգի հասարակութեան մէջ կան նաեւ այլ բարձրաստիճան հոգեւորականներ: Վեհափառը յանախակի ողջոյններ է փոխադարձում ժպտացող դէմքերով խոնարհ գլուխ տուող անձանց: Ցայտնի է, օտար դեսպաններ, դեսպանատան պաշտօնեաներ, պետական, բաղաքական ու զինուորական գործիչներ են մեծ մասը՝ աշխարհի գրեթէ բոլոր երկրներից: Վեղարը մատնում է մեր ազգային պատկանելութիւնը: Հայ եկե՛ղեցի ու հայկական վեղար չկայ: Պաշտօնական ճառերի փոխանակութիւնից յետոյ, աշխուժանում է յոտնկայս «շրջապտոյտ» հիւրընկալութիւնը: Դեռատի ու խիստ գրաւիչ մի տիկին, ափսէն ձեռքը, մօտեցաւ Վեհին· նազելի ժպիտով ու հրաշալի ֆրանսերէնով առաջարկեց ընդունել ափսէն: Լիբանանի դեսպանի տիկինն էր, որին ինչ անց միացաւ նաեւ ամուսինը: Կարճ, բայց բովանդակալից էր զրոյցը Լիբանանի ու Լիբանանահայութեան աւանդական կապերի մասին: Հաճելի պահ: Դարձեալ՝ Վեհն ու Սփիւռքը ամէն ժամ, ամէնուրեք...:

Սովետական ներկայացուցիչներից թուում էր ամենաաշխուժը Անաստաս Միկոյեանն էր· հայկական արտաքաց հիւրասիրութիւնը մատուցում էր ուր որ անկ է դիւանագիտական իրեն յատուկ

ընթրութեամբ: Խիստ պարզ ու խիստ շարժունակ՝ գրեթէ ամէն տեղ էր ևա, այդ լայնարձակ դահլիճի մէջ միայն դէպի մեր կողմերը չերեւաց: Մինչ այդ ես ևկատել էի Հայ ժողովրդի պաևծալի զաւակ՝ Մարշալ Բաղրամեաևի լուսարձակ դէմքը: Վեհափառին ասացի այդ մասին: Ուզում էի, որ այդ պահին հաևդիպեևք իևքև ու Վեհը: Սպասել, որ Մարշալը իևքը ևկատէր Վեհին, այդ ծովածաւալ բազմութեաև մէջ, կը ևշաևակէր խիստ վրստահել պատահականութեաև: Չէի կարող Վեհին առաջարկել, որ մեևք գևաևք ևրա մօտ: Փորձեցի հակառակը:

— Թոյլ տուէք, Վեհափառ, խնդրել իրեև որ գայ Ձեզ մօտ:

— Գուցէ պէտք չկայ-, պատասխաևեց Վեհը մի շեշտով, որ ես հասկացայ՝ «Եթէ կարողաևաս, շատ լաւ կը լինի»:

Ժպտալով գևացի կաևգևեցի Մարշալի կողքին այևպէս, որ չէր կարող ինձ չտեսևել: Ես ձեւացրի, թէ իրր իրեև չեմ ևայում եւ հեևց այևպէս պատահմամբ եմ եկել իր մօտերը: Շատ ուրախ զրուցում էր իրեև շրջապատողևերի հետ: Ցաևկարծ ձայևը կտրուեց ու լսեցի, երբ ռուսերէև ասաց.

— Սպասեցէք, սպասեցէք, ևա մերոևցից է:

Ու մօտեցաւ ինձ:

— Դու Հայ հայր սուրբ ես, չէ՞:

— Այև էլ՝ ինչպէ՛ս-, հրևուաևքով պատասխա-

ձեցի, համարելով, որ ցպատակիս արդէն հասայ։

— Բայց, այդ ինչպէ՞ս։ Կրեմլի համար շատ ջահել ես։ Ո՞վ ես դու–, ուզում էր ասել՝ «Ինչ հանգամանքով ես այստեղ»։

— Վեհափառը այստեղ է։ Ես իր գաւազանակիրն եմ։

— Իրապէ՞ս, ո՞ւր է։

Ծոյց տուի։ Եւ թէեւ բաւականին հեռու էր Վեհը, իրար տեսան։ Մարշալը յաղթանդամ, գիրուկ թաթերը գլխավերեւ իրար միացնելով հեռուից հեռու հզօր հնչեցրեց։

— Ողջո՛յն, Վեհափա՛ռ, ողջո՛յն։

Հին ծանօթներ էին։

Անմիջապէս երկու զրուցակից զինուորականների թեւը մտած, առաջացաւ դէպի Վեհը։ Սկըսւեց ցնծալից, սրտաբաց զրոյց Հայաստանի, էջմիածնի, Հայ Եկեղեցու, Սփիւռքահայութեան մասին։ Մարշալը ամէն հնչին, հին թէ նոր, զարմանալիօրէն բաջատեղեակ էր։ Հանդէս էր գալիս նախկին ձեմարանականը եւ պատկառելի զինուորականը։ Հմայիչ ու ազդու էր նրա պարզ, անսեթեւեթ, շեշտակի ու խորաթափանց խօսքը։ Խօսակցութիւնը մէջընդմէջ ոուսերէն էր թարգմանում կողքի զինուորականներից, որոնցից մէկը Բալթիկ ծովի գլխաւոր ադմիրալն էր, միւսը՝ օդային ուժի ընդհանուր մարշալը։

Մինչեռ այսպէս ուրախ–ուրախ, բայց բարձ-

րաձայն, մանաւանդ՝ հայերէն, զրոյցը ընթանում էր, յանկարծ·

— Օ՛, Վեհափառ, ճանաչո՞ւմ էք–, ասելով, Բաղրամեանը ներկայացրեց զուսպ ու հաճելի ժպիտով մօտեցող զոյգին·– Համազասպ Ցարութիւնեանն է, Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ Սովետական Միութեան բարձրաստիճան ներկայացուցիչներից, իսկ իր այս սիրուն կին տիկինն էլ՝ Ցովհաննէս Թումանեանի թոռնիկը: Լաւ է, չէ՞, Վեհափառ:

Հազիւ էինք ընտելացել վերջիններիս ներկայութեան, մէկ էլ բազմութեան միջից, ասես թռչկոտելով մէկը արագ եկաւ ու ջերմօրէն համբուրեց Վեհի ձեռքը: Նոյնպէս հին ծանօթ էր: Սովետական Միութեան ամուսնի բանդակագործներից Նիկողոս Նիկողոսեանը, որը դեռ վերջերս պատրաստել էր Վեհի բանդակը:

— Այս ի՞նչ եմ նկատում, Իվան Խրիստաֆորովիչ–, թեթուելով դէպի Բաղրամեանը ռուսական բացսիրտ ժպիտով սկսեց կատակել Օդուժի Մարշալը: –Ամբողջ Հայ ժողովուրդը այստեղ է իր բոլոր ներկայացուցիչներով·· Աստուած բարին կատարի:

Բոլորս միաբերան աշխուժ ծիծաղեցինք:

— Իսկապէս, Վեհափառ, Հայ ժողովուրդը այստեղ է· Հայրապետ, Վարչապետ, Սպարապետ, Վարդապետ եւ միւսները: Հրաշալի է: Զարմանալի եմք, չէ՞, շատ զարմանալի եմք Հայերս:

Սրտի խորը գոհունակութեամբ, ժպտալով հաւանութիւն տուեց վեհափառը:

— Իվան Խրիստոֆորովիչ–, դիմեց դարձեալ Օդուժի կատակասէր Մարշալը–, կարո՞ղ եմ Պատրիարքին (ընկատի ուներ վեհափառին) մէկերկու մտերիմ հարց տալ:

Վեհափառը հասկացաւ առանց թարգմանութեան եւ շարունակելով ժպտալ, պատասխանեց.

— Ինչո՞ւ չէ, կարող էք:

— Այս ջահել վարդապետները ի՞նչ են մտածել, որ այսքան երիտասարդ եկեղեցական են դարձել: Մեղք չե՞ն: Ա՛յ թէ օդաչու կը լինէին:

— Նրանք եւս զինուորական են: Համազգեստն է տարբեր. նպատակը նոյնպէս ծառայութիւնն է ժողովրդին:

— Այո՞: Հիանալի է: Իսկ ծխել կարո՞ղ են:

— Եթէ չծխեն, աւելի լաւ:

— Խմե՞լ:

— Եթէ չխմեն, էլ աւելի լաւ:

— Բոլորովի՞ն չխմեն:

— Այո՛, ի հարկէ:

— Օ՛, Աստուած իմ, այդ ինչպէ՞ս: Հապա, ներողութիւն, աղջիկ-մաղջիկ...

Այստեղ վեհափառը միայն ժպտաց, երիտասարդ վարդապետներս էլ մեր գլուխները կախեցինք չափազանց սրտամօտ այս խօսքերի համար:

— Հիմա, ես հարց ունեմ–, աւելացրեց վեհը: –Պարոն Մարշալը ի՞նչ կարող է ասել Հայաս-

տանի երկնքի անվտանգութեան մասին:

Բաղրամեանը իմքը թարգմանեց:

— Օ՛, յաւիտեանս յաւիտենից այլեւս խօսք չի կարող լինել Հայաստանի ո՛չ երկնքի, ո՛չ էլ երկրի վտանգաւորութեան մասին; Եթէ գիտենաք հենց այս պահին ֆանի-ֆանի՛ արթուն աչքեր հսկում են Հայոց երկինքին ու հողը···–, ամենայն լրջութեամբ հաւաստեց Օդուժի Մարշալը:

Հպարտ, երաշխաւորուած ու երջանիկ վերադարձաւ վեհը հիւրանոց, սկսուած գրոյցը միչեւ խոր գիշեր շարունակելու եւ բացառիկ երեկոն մեկնաբանելու ու ըմբռշխնելու համար: Զէ՞ որ պատմական երկա՛ր ընդմիջումից յետոյ այդ երեկոյին հով-հովի էին Հայոց «Հայրապետը, Վարչապետը, Սպարապետն ու Վարդապետը··», եւ ոչ մի վախ աշխարհի ամենահզօր թշնամուց անգամ:

«Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս···»:

Եւ այսպէս շարունակ ձգւում էր, ձգւում շարքը հայրապետական հանդիպումների՝ Մարտիրոս Սարեանի, Արամ Խաչատուրեանի, Վարդան Աճեմեանի, Ցովսէփ Օրբելու, Ռաֆայէլ Իսրայէլեանի, Միքայէլ Մազմանեանի, Կոստան Զարեանի, Պարոյր Սեւակի, Սիլվա Կապուտիկեանի եւ բազում-բազում այլ մեծամեծների հետ, հանդիպումներ, որոնցից իւրաքանչիւրը մի յուզիչ ու խորհրդաստ դրուագ է հայրենասիրութեան ու հայեցիութեան, եւ Հայ Եկեղեցու, ար-

ւեստի, գրականութեան, մշակոյթի նկատմամբ տածուած անսահման սիրոյ ու գուրգուրանքի: Սակայն այդ հանդիպումները առանձինն նշանակութիւն էին ստանում այնու, որ իւրովի դըրսեւորում էին վեհի էութիւնը, ոգին, նկարագիրը, համոզումները, սկզբունքները, նպատակային ծրագրերն ու մտահոգութիւնները, նախասիրութիւնները, ճաշակը...:

Դալա՛ր ու երկար ճամբայ ձեզ, կենարար հանդիպումներ:

Մաշտոցեան Մատենադարան: Այնքա՛ն բարիք ու բարեշէն անուններ են մէկտեղուել այստեղ, այնքա՛ն «պղերգ» ու «տարտամ», «իմաստնահեղձ» ու «մեծահոչակ» անուններ՝ իրենց «կայծակնամաքուր» պարզութեամբ, «ըստ կարս» ապարուած գիտական ու մշակութային վիթխարի ժառանգութեամբ... ու յանկարծ բացակայ է ինքը՝ Ռուլինը Թորոս, Հայ բնաշխարհի, ոգու ամենահարազատ եւ ամենաանուրբ գծի ու գոյնի տիեզերական վրձնահարը...: Մաշտոցեան Մատենադարանն առա՞նց Ռուլինի: Բնակա՞ն էր դա. ո՛չ: Այսպէս էր խորհում եւ ինքը՝ վեհը, որն ի վաղուց հետէ մեծապէս գուրգուրացող էր հայկական ձեռագրական ժառանգութեան եւ գործնական, ճշմարիտ բարեկամը Մաշտոցեան

Մատենադարանի: Դեռ հայրապետական ծողը չզգեցած, Վեհը մի շարք ձեռագրեր էր ցուիրաբերել, որպէսզի յաւերժ ապահով հանգրուանեն այստեղ եւ հետազօտուեն ըստ ամենայնի առ ի պայծառութիւն հայրենական գիտութեան ու մշակոյթի:

Այս անգամ հայրապետական առաքելութեամբ Վեհը Երուսաղէմում էր: Շատ էին յուզող հարցերը, ինչպէս միշտ, բայց կար մանաւանդ ժառանգաւորաց հնաւանդ Վարժարանի Ալեքս եւ Մարի Մանուկեան ազգանուէր ամոլի ընդակառոյց շէնքի բացումը: Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Սրբազանը այդ պատիւը եւս սիրայօժար վերապահել էր Վեհին, որը կրկնակի ցնծութեամբ էր իրագործում այն՝ իբրեւ վաստակեալ մանկավարժ եւ կրթասէր Կաթողիկոս:

Բայց կատարուեց եւ աւելին՝ զարմանալին ու հրաշալին: Ցայտնի է, որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի գանձատուն-ձեռագրատունը «լեցուն» է Թորոս Ռոսլինով, այնքան լեցուն, որ ասես նրա ծնընդավայր «տուն-թանգարանը» լինի: Փա՛ռք նախախնամութեան, որ այդ խըթնայուել է Հայ ժողովրդին ու մշակոյթին: Սակայն, Երուսաղէմը, այդուհանդերձ, «զարիպութիւն» է Հայ մարդու եւ Հայ ձեռագրի, Թորոս Ռոսլինի եւ նրա ձեռագրերի համար եւս... Իսկ բուն, մայրենի, հարազատ երկիրը, նոյնչափ հարազատ Մաշտոցեան Մատենադարանը՝

մի կողմից, Ռոսլինն ու իր ձեռագրերը միւս կողմից՝ իրարից զրկուած եւ իրար կարօտ: Այս այրում էր նրանց՝ վեհի եւ Պատրիարք Սրբազան Հօր զոյգ հոգիները: Եւ այդ այրման երկնող մէկ պահին՝ Պատրիարք Սրբազանը նուիրական նշխարի ինչպէս վեհին մատուցեց Թորոս Ռոսլինի հրաշագործութիւնների մին՝ մի ծաղկազարդեալ Աւետարան, որպէսզի Մատենադարանը՝ տունն առանց իր վսեմ զաւակի եւ զաւակն առանց իր մայրենի տան չմնան: Ողիշէ Սրբազանը ամենապարզ, բայց ամենանպատակամէտ մակագրութիւնն էր թողել ձեռագրի էջերից մէկի վրայ· «...Ի վայելումն ազգիս Հայոց»:

Ու վեհը Աւետարանը բերաւ հայրենիք, իրագործելով իւրովի մի հայրենադարձութիւն, մի ցնցող տուն-դարձ՝ աւելի քան 600 տարուայ տարաբախտ պանդխտութիւնից յետոյ:

Բայց միայն այսքա՞նը...: Օ՛, մեր ձեռագրերի ճակատագիրը՝ մեր իսկ ժողովրդի անօրինակ ճակատագրի անտարբերելի երկուորեակը... եւ այդ երկուքի միջեւ՝ Հայ Եկեղեցին ու նրա «ռամիկ» եւ «փծուն» մշակները:

Պատմութիւնը շարունակւում է, մերթ իսկ կրկնւում է իրեն: Հայ Եկեղեցու սպասաւորներից մէկը վեհին վեհամօր անունով ընծայաբե-

րում է մի ձեռագիր, այս անգամ եւս՝ Աւետարան, բայց ոչ տասնչորրորդ դարի, այլ ուղիղ եօթհարիւր տարի աւելի հին՝ եօթերորդ դարի, հայերէն ամենահին ամբողջական ձեռագիրը ամբողջ աշխարհում: «Վեհամօր Աւետարան»՝ մայր ժողովրդի եւ հարազատ մօր սրբազան «մըննացորդաց»:

— Այս եւս պէտք է վերադառնայ իր մեծ ընտանիքը, իր արիւնակիցների մօտ, իր մայր տունը՝ Մաշտոցեան Մատենադարան: Նուա՞զ պատմելիք ունի լուութիւնը զրոյցի վերածած իր հարազատներին: Օ՛, թէ մարդ կարողանար ունկնդրել այդ տարօրինակ զրոյցը···: -Այս եւս··- վճռեց Վեհը:

Ու հիմա, երբ Մաշտոցեան Մատենադարանում ամենօրեայ յուշազրոյցի են նստում բազմադարեան մեր ձեռագրերը երբեմնի մեր նախարար-բազմականների նման, այս երկու՝ «Թորոս Ռոսլինի Աւետարանն» ու «Վեհամօր Աւետարանը» բազմում են առաջին երկու նախամեծար բարձերի վրայ՝ իրենց պատուակիցների ու բախտակիցների շուրջ-բոլորի մէջ ու իրենց անօրինակ դիւցազնապատումն անում···:

Ո՛վ առաքինասէր ընթերցող, յորժամ հանդիպիս այսմ զոյգ տառից, որ ընծայեալ դնին աստ «ի վայելումն ազգիս», միով «Հայր մերիւ» յիշման արժանի արա ի մաքրափայլ մաղթանս ընդ զերանելի գծողս եւ զհայրենասիրտ նուիրատուս սոցին· ամէն:

Բայց դեռ կային ու կան եւ ուրիշներ, տուն-դարձի ակնդէտ հայրենաբաղձ հոգիներ...:

Ծնուել էր ևա Երուսաղէմում: Վաղագոյն ժամանակներից այնտեղ ծուարած արաբախօս «բաղաֆացիներ» էին իր ծնողները: Անունը՝ Յովհաննէս Խաչատուրեան, ապա՝ Օհան Դուրեան: Մանուկ էր ևա, բայց «մանուկ մի հսկայ», երբ վտիտ մատները հանդէս առ հանդէս մեղեդիներ էին հրաշագործում դպրոցի երգեհոնի ստեղնաշարի վրայ: Մեծացաւ, շուտ եւ հրաշալիօրէն մեծացաւ ևա, անցաւ սահմանից սահման, բեմից բեմ, մակարդակից մակարդակ, շռայլ ծափեր, դրուատանք ու գովք խլելով Եւրոպայի գրեթէ բոլոր մայրաքաղաքներում: Թէեւ ոչ միայն վերջին, բայց վերջին ծափահարողը եղաւ Փարիզը: Փարի՛զը...:

Այնտեղ էր Վեհը. իր պատմական հերթական այցելութիւններից մէկն էր: Տեսաւ ու լսեց ընդրան: Լսում էր, անշուշտ, Վեհը երաժշտութիւն, շատերի նման, սակայն միա՞յն լսում էր իր արուեստասէր ոգու ողջ լարուածութեամբ: Ո՛չ, ի հարկէ, միայն չէր լսում, միայն չէր ըմբռնում...: Եւ արդիւնքը եղաւ այն, որ Օհան Դուրեան, երբեմնի արաբախօս շեղակի աչուըներով մանուկը, իր հանճարի ողջ հասունութեամբ մուտք գործեց հայրենական իր երկիրը Վեհի թելադրանքով ու աջակցութեամբ, ինչպէս որդին՝ բռնած հօրը ձեռքը առաջին անգամ կը

մտնէր սրբազան դպրոցից ներս:

Միառժամանակ մնաց Մայր Աթոռում, միչչեւ որ համապատասխան տնօրինութիւններ լինէին նրա մասին: Ես, առաւել քան որեւէ մէկը, ես գիտեմ, թէ ինչպիսի ուշադրութիւն ու գուրգուրանք էր տածում վեհը նրա հանդէպ· ինչ է «հայրական» ասելը:

— Սենեակը տաք լինի, անդորրը՝ ապահով, սնունդը՝ ինչ որ կը նախընտրէ···—, հրահանգում էր վեհը ինձ:

Ես, բնական է, լիուլի կատարում էի վեհի հրամանը, թէեւ այս պարագային ինչ որ բան այլ էր, կար նաեւ այլ պարտաւորիչ մի ներքին հրահանգ· չէ՞ որ Օհան Դուրեանը ձայնագրութեան եւ արաբերէնի իմ առաջին ուսուցիչն էր Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանում:

Այսպէս նա մնաց այստեղ, «ընդ հովանեաւ սրբոյ Միածնաէջ Տաճարիս եւ ընդ ձեռամբ Նորին վեհափառութեան», օրն ի բուն նստած աթոռին կամ մահճակալի վրայ, ձեռքին ձայնագրութիւնների հաստափոր հատորներ, լուռ, առանց դաշնամուրի համանուագներ էր պատրաստում՝ հնչեցնելու հայրենական բեմի վրայ, հարազատ, հիմնովին արուեստակից ուսկնդիրների առաջ:

Շատ յախուռն էր Օհան Դուրեանի շռայլ յաղթարշաւը Երեւանեան դահլիճներում, ուր գրեթէ միշտ ներկայ էր լինում վեհը իր շքախմբով: Ժո-

ղովուրդը վարժուել էր դրան, փնտռում էր այդ: Ո՞վ չգիտէր, որ Օհան Դուրեանին Վեհափառն էր Հայաստան բերել:

Օրերից մի օր էլ Օհան Դուրեանը Երեւանից Մայր Աթոռ եկաւ ոչ ամէն օրուայ պէս, մանաւանդ ոչ մենակ···: Հասկանալի էր եւ Վեհի հրճուանքը: Միասին մտանիք պահեստ: Հարկ էր արժանի նուէրով օժտել հարազատ որդու հարազատ հարսնացուին···:

Եւ այնուհետեւ շարունակ հնչեցին բիւրաւոր համանուագներ հայրենի բեմերում Օհան Դուրեանի կախարդական ցպոտի հրահանգների ներքոյ, ի՛նչ փոյթ թէ մազերը թափւում էին երեսն ի վար, գոցում աչքերը եւ առաջը ձայնագիր մի տող անգամ չկար···:

Զգիտեմ, ականատես չեմ մանրամասնութիւններին, բայց լսածս բաւական է, որ այստեղ անվարան ասեմ, թէ միեւնոյն հոգեկան ու ոգեկան ճամբով, նոյնօրինակ խոկումների ու յուզումների թելադրութեամբ, հայրական նման գուրգուրանքով, որդիական նոյնպիսի երախտագիտութեամբ, հայրենասիրական նոյնչափ խոր ու վսեմ յորդորով հայրենիք վերադարձաւ մի այլ «հանճարեղ պատանի»՝ Յովհաննէս Չէֆիճեանը, Վեհի երկրորդ արուեստագէտ որդեգիրը:

Իրապէս իրթիռային արագութեամբ նա նուաճեց Հայ երաժշտութեան խմբավարական արուեստի ամենաանհաս հեռաստաններր՝ հպարտ հնչեցնելով հայկական մեղեդիներր հայրենի երկնակամարի տակ ու հեռուոր, շա՛տ հեռուոր եւ շա՛տ դժուարամատչելի բեմերի վրայ։

Հայ ժողովուրդր այսօր ընտելացած է այն մտքին ու պատկերին, թէ ինքր, ասես, տեսնում եւ ունկնդրում է կենդանի Կոմիտասին։

Եւ այսպէս, իր հանճարեղ զոյգ արուեստագէտ որդիներից երբեմնի զրկուած Հայոց աշխարհր եւ իրենց նուիրական հայրենիքից զրկուած երբեմնի տարագիր այս զոյգր՝ իրար գտան, գըրկախառնուեցին, փոխադարձաբար պարծանք ու հպարտութիւն շռայլելով մէկր միւսին։

Ինչքան շատ է այստեղ Վեհի բաժինր։ Հայրենասիրական ու ժողովրդանուէր ինչ հզօր ներքին մղումով է նա իրագործում այս ամէնր։

Երախտիքդ անսպա՛ռ, երախտաշա՛տ Կաթողիկոս։

Երեւանում էր արդէն, որ կարծում էին, թէ ինձ անակնկալ են մատուցում․

— Գիտե՞ս որ Վեհափառր Րաֆֆու «Խենթի» գերեզմանին նոր շիրմաքար է դնել տուել․․․։

— Լսե՞լ ես, ասում են Վեհափառր Եւրոպա է

գնացել Արփաչայ-Սեւան գետնուղու հորատման համար հզօր մեքենաների ուսիրատուութիւն կազմակերպելու Սփիւռահայութեան միջոցներով: Սմանչելի՛ է:

— Կարդացի՞ր Վեհի կոչը Լիբանանահայ աղետեալներին օգնելու համար հանգանակութիւն կատարելու մասին: Քսանհինգ հազար դոլար առաջինը ինքն է ուսիրել···:

Ու այսպէս, անընդմէջ, անընդհատ հիացական յայտնութիւններ Վեհի հայրենասիրական, մշակութային, եկեղեցական բոլորանուէր իրագործումների, ազգային հոգեւոր ու նիւթական ամենաարժէքաւոր բեկորի ու երեւոյթի նկատմամբ խորունկ նախանձախնդրութեան, գուրգուրանքի եւ մարդկայնութեան մասին:

Ո՞ր մէկը թուել···:

Ու վերջապէս յիշում եմ յուշերից բազում·–

Բարապանի զարկը իմ դրան· գիտէի, Վեհի հրամանն էր: Գնում էի, չթաւճնեմ, ոչ միշտ գոհ սրտով: Ծուրտը չեմ սիրել կեանքում, իսկ այդ կանչը, քաջ գիտէի, որ պիտի երբեմն ժամեր արժէր, անվերջ շրջապտոյտներ վանքի շուրջ բոլոր՝ մեր ոտքերի տակ ճոռացող ձեան տըրտունջին հակառակ: Դուրսը՝ բիւրեղացած ձիւն, ցրտից պրկուած գիշեր, լոյսի սպասող, յոյսի ա-

կնդէտ Մայր Կաթողիկէ եւ Իմքը՝ Վեհը։

Ցիշում է եւ Իմքը.

«Թոյլ տուէք պատկեր մը ձեր կայացնել ձեզ Մեր առօրեայ կեանքէն։ Ցաճախ երեկոները, երբ գրեթէ բոլոր միաբանները իրենց խուցերուն մէջ կը հանգստանան, Մենք առանձին կամ ընկերակցութեամբ վարդապետի մը, կը շրջինք այս Ս. Տաճարի սալերուն վրայ եւ երբեմն կանգ կ'առնենք՝ հեռուէն դիտելու համար ձոր դէմքը։ Մանաւանդ, երբ երեկոները պայծառ են, ձոր ուրուագիծը կ'երեւայ յստակ եւ ուժեղ։ Եւ Մեզ այնպէս կը թուի, թէ ամէն օր ձոր բան մը կը տեսնենք ձոր վրայ, ձոր մէջ եւ ձոր բան մը կը հասկնանք, ձոր ապրում մը ծնունդ կ'առնէ Մեր կուրծքի տակ...»։

Քայլում էր Նա։ Սկզբում յաճախ անխօս ու անձայն, բայց միշտ հաստատուն, մշտապէս արագ ու վստահ քայլերով։ Կարծում էին, թէ յոգնած առօրեայ հոգս ու խոնջէնքից, Վեհը անվերջորով «հանգիստ է առնում»։ «Ո՞վ կարդալ սիրտը գիտէ», ...մանաւանդ խոր եւ ուշ գիշերներին։ Բայց գիտէ Աստուած՝ մտորման, խոկման, ինչո՞ւ չէ նաեւ՝ ցաւ ու խռովքի, ինչո՞ւ չէ նաեւ՝ անհաս բաղձանքի եւ տեսիլքների երազ յաճախման, հեւքի ու բովի սուղ ժամեր էին այդ գիշերները։ Հաւատացէք ինձ. գիշերուայ կարկամ, խոր մթութեան մէջ ես տեսնում էի, թէ ինչպէս թել-թել, արագ, անխնայ արծաթում էին մազե-

րը վեհի, այնքա՛ն տրտմօրէն վշտացնելով վեհամօր սիրտը։

Այսպէս է անցնում վեհի «հանգիստը»։
Այրւում է Մոմը, եւ այն էլ՝ ինչպէ՛ս...։

Ամէն Հայի սրտից բխած,
Լսիր այս ձայն, ո՛վ Աստուած.
Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկա՛ր օրեր Հայոց Հօր...։

Ամէն

